րութեան ժամանակ կը սահմանէր Մարտի 27ը և ծերակուտի համար Ապրիլ 10 և նոր կորդէսներու բացումը Ապրիլ 25ի։

Ընտրութիւնք կատարուեցան Մարտ 27ի։ Ընտրուեցան 300 պաշտօնարանի կուսակից, 60 պահպանողականք՝ Սիլվէլայի խմբէն, 10 պահպանողականք Ռոմերոյ Ռոպլետոյ կողմէն և 6 էլտուայէնի և տէտուանի, 5 կարլոսեանք, 10 հանրապետականք։

Կուբայի ընտրութեանց մէջ 30 երեսփոխանաց մէջ ընտրուեցան 29 ինքնավարականք և 9 միացեալ սահմանադրականներէն։

Կուբայի այս տարուան շաքարի և ծխախոտի հունձքը, այսքան անցքերով հանդերձ, շատ գերազանցեց քան անցեալ տարիները։

## ԹՈՒՐՔԻԱ

Օսմանեան Պետութեան ի Ռուսաստանէ ընդունելու զրամին առթիւ Ռուսիոյ դեսպանը ի Կ. Պոլիս պահանջած էր Թուրքիոյ 1878ի պատերազմի վճարքէն մեծ մաս մը։ Բ. Դուռը իր դեսպանին միջոցաւ խնդրեց Զարի կառավարութենէն գումարին նուազումը, և առաջած կը համարուի։ Այժմ Անգլիա, Գալլիա և Իտալիա կը պահանջեն 1896ի պատահարաց առթիւ ի մայրաքաղաքին, իրենց հպատակաց եղած վնասուց դրամական փոխարինութիւնը։

Մարտ 14ի հեռագիր մը ի Կ. Պօլսոյ առ Թան կէս-պաշտօնական լրագիրն Գալլիոյ, կ'ըսէ, որ Գերմանիոյ դեսպանատան զինուորական կցորդն ի Կ. Պոլիս, կոչուեր է ի Սուլթանէ և խորհրդակցութեամբ սահմանուեր ռազմագիտական երկաթուղւոյն շինութիւն մը ընդ Զանաքկալէ, Ռոդոստոյ և Գալլիպոլի։ Դրամը պէտք է փոխառն գերման դրամատունք։

Կը կարծուի որ Բ. Դուռը հրաման ղրկած է Եդրնէի փաշային, սկսիլ հանել զինուորքը ի Թեսալիոյ։

Ի Թեսալոնիկէ 26 Մարտի կը հեռագրեն, որ բազմաթիւ գունդեր Թեսալիայէն կը չուեն Մակեդոնիոյ հիւսիսային սահմանքը, մանաւանդ Քոսովայի վիլայէթի և Իւսկիւպի շուրջ կողմը, որով հանդէպ Սերբիոյ և Բուլղարիոյ Սորէյի՝ ի ձիտոէ երեք ժանտախտի դէպք պատահելով, առողջապահական կանոնաց ներքեւ ենթարկուեցաւ նաւահանգիստը։

## ԿՐԵՏԷ

Ի Կրետէ կը շարունակէ անորոշ վիճակ մը։ Մեծ պետութեանց ոմանք կը պնդեն Գէորգիոս իշխանին թեկնածութեան վրայ. իսկ Գերմանիա կոչեց իւր զինուորքը և դրահաւորը ի Կրետէէ, նոյնը պիտի ընէ Ապրիլ 15ի և Աւստրիա։ Երկու հրաժարող Պետութիւնք միանգամայն յայտնեցին՝ որ իրենց քաշուիլն ի Կրետէէ. Եւրոպական համաձայնութենէ քաշուիլ ըսել չէ, այլ զի այլ եւս իրենց ներկայութիւնը չեն դատուիր կարեւոր. կամ լաւ եւս ըսել, չեն ուզեր միջամտել ուղղակի Գէորգիոս իշխանին թեկնածութեանը մասին։ Այժմ Բ. Դուռը կ'ուզէ կարգավարել անուանել Թրքահպատակ քրիստոնեայ մի, և յանուանէ կ'առաջարկէ զիշխանն Աղեքսանդր Կարաթէոդորի։

Մ—Ն.

## ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

### ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԻՑ

ԱՂԲԻՒՐ (փետրուար), Տփղիս.

Օրօր. (ոտանաւոր — Յ. Թ. ԳԱՅԱՅԵԱՆ։ — Աքաղաղը և կատուն (փոխադր.) — Մ. ՄԻՍԱՔԵԱՆՑ։ — Լեւոն-Կայսր, Հայկական աւանդութիւն (շար.) — ՍԷՑԼԱՆ։ — Քեզի (ոտանաւոր) — ՕՐ. ՍԱԹԻՆԻԿ ՖՈՑԱՃԵԱՆ։ — Առաղձագործը և սառնեգործ աղջիկը (պատմական անգք. Ֆուրմանից) — Գ. ԹՈՒՄԵԱՆ։ — Կուտք (արեւել. զրոյց) — ԱՏՐՊԵՏ։ — Կենսագրական, Վոլֆհանգ Գէօթէ (շար.) — Ն. ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆ։ — Գիտական զբօսանք. Խցան «ինչպէս կամենաք» (նկարով) — Գ. Բ.։ — Զուարճալիք. Հանելուկներ։

ԱՐԱՐԱՏ (յունուար), Վաղարշապատ։

Քրիստոսի ա. Յայտնութիւնը։ — Ս. Յովհաննէս Մկրտիչ — Կ. Վ.։ — Հերովդէս Մեծ։ — Գրախօսութիւններ — Կ. Վ.։ — Եկեղեցական քրոնիկոն։ — Մկրտիչ Նաղաշ (շար.) — Կ.

digitised by A.R.A.R.@

Կ.։ — Հ. Գէլցերի Համառօտութիւն Բիւզանդական կայսրներու պատմութեան (շար.) — Թրգմ. Մ. Վ.։ — Հաց և իշխանութիւն (փոխ.) — Ս. Մ.։ — Այլ և այլք։ — Եկեղեցի Հայաստանեայց։ — Մայր աթոռ. — Ռուսահայք. — Պարսկահայք։ — Պաշտօնականք։ — Յանձնուած. Յիշատակարան գրոց պատմագրաբար, որք չինեալ քաջ քարտուղարն՝ առաքելական եպիսկոպոսն և աստուածաբան վարդապետն Տէր-Աստուածատուր, քուերորդի մեծ բաբուանապետին Յակոբայ Ովսաննայ։ — Յայտարարութիւններ. — Մատենախօսութիւն։ — Սուր մոքեր։

ԱՐ. ՄԱՄՈՒԼ (1 մարտ), Զմիւռնիա։

Մեր տնտեսական վիճակը։ — Ընտանեկան եղերք մը (շար.) — Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ։ — Գաղտնեխոյզն Նորենց (շար. և վերջ) — ԳՐԻԳՈՐ Կ. ՅԱԿՈԲԵԱՆ։ — Ուղեգրական, Այնթէպէն — Մալաթիա — Ս. Յ. ՄՈՄՃԵԱՆ։ — Ալֆօնս Տօտէ — ՎՌԱՄ։ — Գրադատական՝ «Հաւաքածոյ ընտիր գրուածոց». Հեղինակ Ս. Գաբամաճեան (շար.) — ԽՕՍՆԱԿ։ — Գինով օրերէ վերջ — Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ։ — Շանթարգելը. Թրգմ. Գ. Խօրասանճեան — ՀԱՆՐԻ ԺԻՐՄԷՆ։ — Նորընտիր Մեծաւորն Մխիթարեան միաբանութեան — Գ. ՔՐՔՃԵՕՂԼԻԵԱՆ։ — Մշեցիի մը հարցմունքը Իզմիրի մէջ — ԳԱՐԵԳԻՆ։ — Զուհաճեան հիւանդ — Տ. Գ.։ — Երեկոյթ ի նպաստ ուսումնասէր ընկերութեան — Ռ.։ — Ս. Պատարագի եռաձայն երգեցողութիւն։
— (15 մարտ), Մեր բարքն ու վարքն։ — Ռուճային Շափիղայն (շար.)։ — Հանրային բարոյականն ի Վան — ԾԻԾԵՌՆԻԿ։ — Նամակ առ Տ. Սահակ Սահակեանց — ՄԼՔ. ԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ։ — Կը բաւէ — ՅՈՎՀ. ԳԱԶԱՆՃԵԱՆ։ — Յոյսի երազը — ԳՐԻԳՈՐ Կ. ՅԱԿՈԲԵԱՆ։ — Մագնիսականութիւն — Կ. Մ. ՅԱԿՈԲԵԱՆ։ — Գրադատական — ԽՕՍՆԱԿ։ — Տիպար քահանան — Ն. ԱԳԹԱՐԵԱՆ։ — Կնոջ ակարութիւնը — ԳԷՈՐԳ ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆ։ — Գրական գրոյցներ — ԱԳՐՍԱՄ։ — ✠ Տիգրան էֆ. Զուհաճեան — Ա. Տ.։ — Ընկերակցական տեղեկագիրք։

ԼՈՅՍ ՀԱՆԴԷՍ (28 փետր.), Կ. Պոլիս։

«Եկար աշխարհ, գացիր աշխար» — ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. — Սալոնի կեանքէն — Թ.։ — Սիրաեկրոյ. Յուշատետրէն — ԱՐՇԱԼՈՅՍ։ — Ֆրանս. Գրակ. Կոնգրեսը Եղբարց Օրագիրը — ՍԻՍԱԿ։ — Հոգիներու Թղթատար. — Յուզուած Մոմը — ԳԼԳՈՒԼ։ — Sonnet — Ն. ԹՕՐՈՍԵԱՆ։ — Մանկավարժական Հարցեր — Մ. ԱՂԱՍԵԱՆ։ — Բարոյական և Փիլիսոփայութիւն — ԷՄԻԼ ՖԱԿԷ։ — Դիտողի Դատումներ — ՎԱՐԴ ԱՍՏՂՈՒԿՆԻ։ — Բաց Նամակ — առ Լոյս — ԲԼԻՍ։ — Արշալոյսի Ցոլքեր — Ց. ՄԵԼԻՔ։ — Թռուցիկ Նօթեր — ԼՈՒՍ-ԼՈՒՍ։ — Հինգ տարի ետքը — Նորավէպ — ՀՐԱՏ։ — Այլ և այլք։ — Ազդ։
— (14 մարտ). Հոռհոռութիւն — ԽՄԲԱԳՐԱԿԱՆ։ — Բարոյական և Փիլիսոփայութիւն — ԷՄԻԼ ՖԱԿԷ։ — Դիտողի Դատումներ — ՎԱՐԴ ԱՍՏՂՈՒԿՆԻ։ — Հնագիտական Էջեր — ՆԱՀԱՊԵՏ։ — Գիտական Աշխարհէն (Քրոնիկ) — Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ։ — Ֆրանսական Ուղղագրութիւն — Ն. ԹԱԹՎԱՑԵԱՆ։ — Գոհարներ Ակնայ Ժողովրդ. երգերէն — Զ. ՀԱՆԷՍԵԱՆ։ — Վանական մթնոլորտէն — Վ. ՍԱՐԳ. ԱՃԷՄԵԱՆ։ — Հեռաւորին Յիշատակը (Նորավէպ) — ՀՐԱՏ։ — Քաղաքային տեսութիւն։ — Լոյսի պատասխանները։ — Այլ և այլք։ — Ազդ։

ՊԱՏԿԵՐ (1 փետրուար), Կ. Պոլիս։

Ընտանեկան Աստեղաբաշխութիւն (շար.)։ — Յիսներեակ Յոբելեան վ. Հ. Գարեգին Զարբանալեան Մխիթարեան վարդապետի — ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ։ — Հանգիստ Արհի. Գրիգորիս Արքեպիսկոպոսի Բերիոյ։ — Յաղագս էութեան Աստուծոյ (շար.) ՍԱՐԳԻՍ ՎՐԴՊ. ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ։ — Օրէնսդրութիւն Օսմանեան ըստ ծիսի Անաֆիտայ (շար.)։
— (15 փետր.) Ընտանեկան Աստեղաբաշխութիւն (շար.)։ — Երկայնակեցութեան գաղտնիքները (շար.) — Գ. Վ. Թ.։ — Օրէնսդրութիւն Օսմանեան, ըստ ծիսի Անաֆիտայ (շար.)։ — Յայտնութիւն Աստուածային (շար.) — ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱԶԼԵԱՆ։ — Մանր գիտելիք։ — Վարք ս. Մոճիքայի (շար.) — ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԱԲԻԿԵԱՆ։
— (1 մարտ). Ընտանեկան Աստեղաբաշխութիւն (շար.)։ — Խօսք ընդ Տիրամօր — ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԱԳԱՇ։ — Խոնջ թռչնակն — Հ. Ե. Ս.։ — Երկայնակեցութեան գաղտնիքները — Գ. Վ. Թ.։ — Օրէնսդրութիւն Օսմանեան ըստ ծիսի Անաֆիտայ (շար.)։ — Յարաբերութիւն Աստուծոյ ընդ մարդկան և մարդկան ընդ Աստուծոյ (շար.) — ՊՕՂՏԱՍԱՐ ԳԱՍԱՊԵԱՆ։ — Վարք ս. Մոճիքայի (շար.) — ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԱԲԻԿԵԱՆ։

digitised by A.R.A.R.@